
ՆՈՒՅՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄԻ ՀՈԳԵՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԸ

ԱԼԻ ԴՈՒԱԹԻԱՅ

Հոդվածում քննարկվում է կլինիկական հոգեբանության կարևորագույն խնդիրներից մեկը՝ նույնականացման մեխանիզմի ազդեցությունը հոգեմարմնական հիվանդությունների առաջացման վրա: Մասնավորապես հետազոտվում է սիրտանոթային հիվանդությունների հոգեբանական պայմանավորվածությունը:

Կլինիկական հոգեբանության մեջ ընդունված է այն դրույթը, համաձայն որի՝ անձի հոգեկերտվածքը մեծ նշանակություն ունի թե՛ հոգեկան և թե՛ մարմնական հիվանդությունների առաջացման գործում: Սակայն, եթե հոգեբանության դաշտում մեծ տեղ ունեն անձի տիպաբանության բազմաթիվ օրինակներ, ակնհայտորեն քիչ են զգացվում հոգեմարմնական հիվանդությունների վերաբերյալ մեկնաբանությունները: Այս տեսանկյունից նույնականացման դերը հիվանդությունների առաջացման գործընթացում միջնորդավորված է, այսինքն՝ հիվանդությունը պայմանավորված է բնավորությամբ, իսկ վերջինիս ձևավորման գործում կարևոր է անձի նույնականացման դերը:

Նույնականացման հետևանքով անձը գիտակցված կամ չգիտակցված ձևավորում է ծրագիր, ունենում է նույն ճակատագիրը, ինչ ունեցել է նույնականացման օբյեկտը, մասնավորապես՝ հիվանդանում է այն հիվանդություններով, որոնցով հիվանդացել է այն մարդը, որի հետ նույնականացել է անձը:

Մի շարք հետազոտություններում ուղղակի նշվում է, որ հիվանդությունների առաջացումը պայմանավորված է անձի՝ իր այս կամ այն հարազատի հետ նույնականացմամբ՝ առանց բացատրելու, թե հատկապես ինչ մեխանիզմներով է նույնականացումը առաջ բերում հիվանդություն:

Հոգեվերլուծական գրականության մեջ նույնականացումը սահմանվում է որպես հոգեբանական գործընթաց, որի միջոցով սուբյեկտն իրեն է վերագրում ուրիշի հատկությունները, որակները, ատրիբուտները և մասնակիորեն կամ ամբողջությամբ համապատասխանեցնում իրեն նրա կերպարին:

Նույնականացումը գրեթե նույն ձևով են մեկնաբանում նաև ոչ հոգեվերլուծական դիրքորոշում ունեցող հեղինակները: Այսպես, Ե. Մ. Դուբովսկայան և Ռ. Լ. Կրիչևսկին նույնականացումը դիտում են որպես հուզական-կոգնիտիվ գործընթաց, որի շնորհիվ անձն իր համար նշանակալի մարդուն և իրեն նույնն է համարում¹:

¹ Տե՛ս Дубовская Е. М., Кричевский Р. Л. Феномен идентификации в групповом лидерстве // «Вестник Московского Университета». Серия 14. 1980, № 2, էջ 50 :

Ըստ Ա. Նալչաջյանի՝ «նույնականացումը հանգեցնում է վարքային դրսևորումների՝ օբյեկտի գործողությունների և ապրումների նմանակման, նրա արժեքների և դիրքորոշումների ինտերնալացման»²:

Ե. Մ. Դուբովսկայան և Ռ. Լ. Կրիչևսկին ավելի են կոնկրետացնում այս դրույթը. «Օպերացիոնալ առումով նույնականացումը կարելի է դիտել որպես այլ մարդու վարքային և անձնային բնութագրերի նմանակում, դրանց վերարտադրում իրականության մեջ կամ նմանատիպ վարքային ակտերում, կամ էլ վարքի խորհրդանշային փոփոխականների մեջ»³:

Մյուս պաշտպանական մեխանիզմների նման նույնականացումը նույնպես ենթադիտակցական բնույթ ունի և հենց այդ պատճառով առողջությանը վտանգ է ներկայացնում: Նույնականացումը՝ որպես պաշտպանական հոգեբանական մեխանիզմ, առաջին անգամ նկարագրել է Ջ. Ֆրոյդը. «Ժամանակի ընթացքում (ինքնա) նույնացում հասկացությունը առաջատար դիրք գրավեց Ֆրոյդի աշխատություններում. այն սկսեց հանդես գալ ոչ թե ուղղակի որպես հոգեբանական մեխանիզմներից մեկը, այլ որպես մարդկային սուբյեկտիվության ձևավորման գործընթաց»⁴: Պետք է նշել նաև, որ հոգեվերլուծության դաշտում նույնականացումը դիտվում է ոչ միայն որպես գործընթաց, այլև պաշտպանական մեխանիզմ:

Ջ. Ֆրոյդը նույնականացումը պայմանավորում է իր իդեալին նմանվելու ձգտմամբ, սակայն միևնույն ժամանակ նշում է, որ մարդը կարող է նույնանալ նաև իրեն ատելի անձի հետ:

Նույնականացումը կարող է տեղի ունենալ նաև կորցրած սիրելի անձի կամ այլ օբյեկտի վերականգնման նպատակով: Օրինակ՝ Ջ. Ֆրոյդը ներկայացնում է մի դեպք, երբ երեխան իր կատվին կորցնելուց հետո հայտարարում է, թե ինքը կատու է, սկսում է չորեքթաթ քայլել, մլավել և այլն⁵: Ըստ Նանսի Մակ-Վիլյամսի՝ «ակնհայտ է, կորուստը և մահը դրդում են մարդուն նույնանալ կորցրած սիրո օբյեկտի հետ, որից հետո՝ նրանց հետ, ովքեր կգրավեն կորցրածի տեղը մարդու հուզական աշխարհում»⁶:

Նմանակումը տարբերվում է նույնականացումից նախ և առաջ նրանով, որ այն գիտակցված և ժամանակավոր երևույթ է:

Նույնականացման հոգեբանական մեխանիզմն ի հայտ է գալիս վաղ տարիքից, ըստ որում՝ «նույնականացման ձգտումն այնքան մեծ է և այնքան կարևոր դեր է խաղում օբյեկտային հարաբերություններում, որ երեխան առանց ընտրության նույնանում է սիրո օբյեկտի ցանկացած վարքի հետ, որ ի վիճակի է լինում վերագրել իրեն»⁷:

Նույնականացումը, ըստ Աննա Ֆրոյդի, կարող է տեղի ունենալ նաև ագրեսիոնի, վտանգ ներկայացնող օբյեկտի հետ. «Կերպարանավորելով ագրեսիոնին, ընդունելով նրա ատրիբուտները կամ էլ նմանակելով նրա

² **Налчаджян А. А.** Социально-психическая адаптация личности (формы, механизмы и стратегии). Ер., 1988, с. 142.

³ **Дубовская Е. М., Кричевский Р. Л.**, նշվ. աշխ., էջ 50-61:

⁴ **Лапланш Ж., Понталис Ж.-Б.** Словарь по психоанализу. М., 1996, с. 432.

⁵ **Стю Фрейд З.** Психология масс и анализ человеческого "Я". М., 1926, էջ 61:

⁶ **Мак-Вильямс Н.** Психоаналитическая диагностика. М., 2001, с. 84.

⁷ **Шниц Р. А.** Психоанализ раннего детского возраста. М., 2001, с. 37.

ագրեսիան՝ երեխան նրանից, ում սպառնում են, վերափոխվում է նրա, ով ինքն է սպառնում»⁸:

Այս կերպարանափոխությունը, ըստ հեղինակի, օգնում է հաղթահարելու բացասական ապրումները, ասենք, վախը, տագնապը և պաշտպանել սեփական ես-ը հարձակումով:

Հոգեվերլուծության մեջ տարբերակում են նույնականության մի քանի տեսակ՝ առաջնային, երկրորդային, անակլիտիկ, պրոյեկտիվ, ընդհանուր, մասնավոր, խմբային, ժամանակավոր կամ մշտական, գիտակցության կողմից ընդունելի կամ անընդունելի: Ըստ որում, սրանցից ոչ բոլորը պաշտպանական նշանակություն ունեն: Օրինակ, անակլիտիկ նույնականացումը պաշտպանական նշանակություն չունի, այն բխում է սիրելի անձին նմանվելու ձգտումից: Պաշտպանական նշանակություն չունի նաև առաջնային նույնականացումը, քանի որ երեխայի նույնացումն է մոր հետ այն ժամանակ, երբ դեռ սեփական ես-ն առանձնացված չէ: Հետևաբար, բնական նույնականացման բոլոր տեսակները չեն, որ կարող են համարվել պաշտպանական: Առաջնային նույնականացման դեպքում, երբ երեխան նույնականանում է մոր հետ, պաշտպանական հատկանիշը բացակայում է:

Պրոյեկտիվ նույնականացումը պարզունակ պաշտպանական մեխանիզմ է, որի իմաստը և գործառույթը էքստերնալացումն է:

Անձի նույնականացման բացահայտմանը հոգեվերլուծական թերապիայում կարևոր նշանակություն է տրվում: Ըստ Ն. Մակ-Վիլյամսի՝ «հոգեթերապևտիկ գործընթացի հիմնական մասն ուղղված է լինում այն հին և նոր նույնականացումների բացահայտմանը, որոնք նախկինում լուծում էին երեխայի ներհոգեկան կոնֆլիկտները և դարձել էին ավտոմատ, իսկ հիմա կոնֆլիկտների աղբյուր են մեծի համար»⁹: Նրա կարծիքով, նույնականացումը տեղի է ունենում անհատական որոշ առանձնահատկություններով. ասենք, ոմանք ավելի հեշտ են կարողանում նույնականանալ, դա, ըստ հեղինակի, կարող է պայմանավորված լինել բազային նույնականության պրոբլեմներով կամ հոգեկերտվածքի առանձնահատկություններով: Օրինակ՝ հիստերոիդներն իրենց ավելի հեշտ են նույնականացնում ուրիշների հետ:

Ձ. Ֆրոյդի աշխատություններում արդեն առկա է այն գաղափարը, որ նույնականացման հիմքի վրա կարող են ի հայտ գալ հիվանդություններ: Այսպես, իր «Ձանգվածների հոգեբանությունը և մարդկային ես-ի վերլուծությունը» աշխատության մեջ նա ներկայացնում է հետևյալ դեպքը. «Առավել խառը իրավիճակից մենք նկրտիկ ախտանշանների համալիրում առանձնացնում ենք նույնականացումը: Փոքրիկ աղջիկը, որին մենք ուսումնասիրում էինք, դրսևորում է նույն հիվանդագին ախտանշանն, ինչ իր մայրը, օրինակ, նույն տառապալից հազը: Դա կարող է տեղի ունենալ տարբեր ճանապարհներով: Դա կամ էդիպյան բարդությո՞վ պայմանավորված նույնականացում է մոր հետ, որի իմաստը մոր տեղը գրավելու թշնա-

⁸ Pollock, G. Manifestations of abnormal mourning: Homicide and suicide following the death of another. "The Annals of Psychoanalysis", 1976, № 4, p. 44.

⁹ Мак-Вильямс Н., նշվ. աշխ., էջ 84:

մական ցանկությունն է, այդ ախտանշանը հոր՝ որպես օբյեկտի նկատմամբ սիրո արտահայտություն է, կա՛մ էլ՝ մեղքի զգացման հիման վրա մոր փոխարեն հանդես գալու ձգտման դրսևորում է. «Դու ուզում էիր լինել մայրդ, հիմա դու նա ես, համենայն դեպս տառապանքի մեջ»¹⁰:

Նույնականացումը հոգեվերլուծության մեջ դիտվում է որպես անձի բնավորության, հոգեկերտվածքի ձևավորման կարևորագույն գործոն: Կարևոր նշանակություն է տրվում հատկապես էդիպյան շրջանում տեղի ունեցող նույնականացումներին, երբ վերջիններիս շնորհիվ ձևավորվում է գեր-եսը և հաղթահարվում էդիպյան (էլեկտրայի) բարդույթը:

Ֆրոյդն այս շրջանի նույնականացումների հետ է կապում նաև բնավորության առնական ու իգական գծերի ձևավորումը: Պետք է ասել, իհարկե, որ երեխան շատ ավելի վաղ տարիքից է սկսում նմանակել հարազատներին ու հատկապես ծնողներին, և քանի որ այդ նմանակումները գիտակցված չեն, ապա դրանք նույնպես կարող են դիտվել որպես նույնականացման դրսևորումներ, որոնց հիման վրա, ըստ երևույթին, ձևավորվում են բնավորության առանձին կողմեր:

Ըստ մի շարք հեղինակների՝ նույնականացման մեխանիզմով է տեղի ունենում հոգեվերլուծության մեջ ընդունված, այսպես կոչված, տարելիցի հակազդումը¹¹:

Տարելիցի հակազդումը անձի համար նշանակալի մարդու մահվան տարելիցի շրջանում տրվող յուրահատուկ հոգեբանական, մարմնական կամ վարքային հակազդումներն են, որոնք ի հայտ են գալիս գիտակցաբար կամ ենթագիտակցաբար և խորհրդանշում են կամ ուղղակի կապված են տվյալ իրադարձության հետ: Տարելիցի շրջանում (ասենք՝ հարազատի մահվան տարին, օրը և այլն) անձը կարող է հակազդել խոր դեպրեսիայով, ինքնասպանությամբ, մարմնական հիվանդություններով: Օրինակ՝ Մարի Բոնապարտը՝ Բոնապարտների թագավորական ընտանիքի վերջին ներկայացուցիչը, հավատացած լինելով, որ մոր նման մահանալու է 22 տարեկանում նույն հիվանդությունից, սկսում է դրսևորել այդ հիվանդության ախտանշանները, և միայն իր 22 - ամյակի շեմն անցնելուց հետո են ախտանշաններն անհետանում: Հայտնի երգիչ Էլվիս Փրեսլին, որ խիստ կապված էր մոր հետ, մահանում է նույն տարիքում, ինչ մայրը՝ 42 տարեկանում, մեկ այլ երգիչ՝ Ջանիս Ջոփլինը, ինքնասպանություն է գործում նույն օրը, ինչ իր կուռքը՝ Բեսսի Սմիթը¹²:

Հայտնի հոգեբույժ Կարլ Մենինգերը նկարագրում է հետևյալ դեպքը. «Կոմսուհի Կարդիգանը...ինչպես նշում էին թերթերը, ամեն տարի իր մոր մահվան օրը ստիպված էր պայքարել ինքնասպանության ցանկության դեմ: ...Ի վերջո, մահվան ութերորդ տարեդարձին, նա հաջողեցնում է նույն օրը, նույն ժամին վերջ տալ իր կյանքին»¹³:

¹⁰ Фрейд З., Գշվ. աշխ., էջ 101:

¹¹ Steu Pollock, G. Anniversary reactions, trauma and mourning. «Psychoanalytic Quarterly», № 39, 1976, էջ 29-30:

¹² Steu Gabriel M. A. Anniversary Reactions: Trauma Revisited. «Clinical Social Work Journal», № 20(2), 1992, էջ 179-192:

¹³ Menninger, K. Man against himself. New York: Harourt Brace, 1938, p. 53.

Տարելիցի հակազդումները տարբեր կերպ են բացատրվում մասնագետների կողմից, ընդ որում, տեսությունների մեծ մասում կարևորվում է նույնականացման մեխանիզմը. ասենք՝ կարևորվում է տրավմայի ծանրությունը, ինչը նպաստում է տարելիցի նույնացմանը:

Ըստ Լ. Հայսլերի՝ «բացի շատ վաղ տարիքում ապրած տրավմայից և դրանով պայմանավորված բարդություններից, ավելի ուշ տարիքում ապրած տրավման նույնպես կարող է հիմք հանդիսանալ տարելիցային նույնացումների և համապատասխան հակազդումների համար, հատկապես եթե տրավմատիկ փորձը և դրա հետագա ներհոգեկան ինտեգրումը կապված են լինում որոշակի ժամանակի, տարիքի, օրվա հետ, կամ էլ տրավմատիկ ապրումը ապահիմտեգրող, դինամիկ բարդության ձևով շարունակում է մնալ ենթագիտակցության մեջ և անընդհատ պահանջում է պաշտպանական հակազդում»¹⁴:

Այսպիսով, վերլուծելով տարբեր գիտնականների հոգեվերլուծական մոտեցումները, մենք հանգում ենք այն եզրակացության, որ դրանք բոլորն էլ, լուսաբանելով խնդրի տարբեր կողմերը իրենցից ներկայացնում են իմաստային մեկ միասնական ամբողջություն:

АЛИ ДОЛАТХА – Психоаналитическое понимание механизма идентификации. – Проблема идентификации в психоаналитическом понимании претерпевала различные изменения. Суть различных подходов сводится к тому, как понимать феномен идентификации – как процесс или как механизм защиты. Если мы сужаем наше понимание идентификации границами защитного механизма, то теряем возможность включить этот психический феномен в более широкое поле исследования. Между тем идентификация как процесс позволяет внести необходимую ясность в понимание того, как формируются психосоматические расстройства. Именно в этом смысле в статье рассматривается феномен идентификации.

ALI DOLATKHAN – Psychoanalytic Understanding of Identification Mechanism. – The problem of identification in the psychoanalytic understanding has undergone various changes. The essence of different approaches is essentially a matter of how to understand the phenomenon of identification as a procedure or even as a defense mechanism. If we narrow our understanding of the identification of the boundaries of protective mechanism, we will lose the possibility of inclusion of the mental phenomenon in a wider field of research. The identification as a process can guide us to clarify other subjects in psychology such as psychosomatic disorders. It is in this sense, that we consider the phenomenon of identification in our article.

¹⁴ **Haesler, L.** Psychodynamics of anniversary reactions. "Scandinavia Psychoanalytic Review", 1986, № 9, p. 13.